Արմեն ՆԱԽՇՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԻ ԾԱՂԿԱՇՈՒԹՅԱՆԵՎ ՁԱՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Ծաղկաշղթայաձև զարդապատկերները Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի ամենատարածված բուսական զարդամոտիվներն են: Վերջիններս հանդես են գալիս բավականին հարուստ բազմազանությամբ: Ծաղկաշղթաների պարզ խմբավորման պարագայում սրանք կարելի է բաժանել երկու առանձին խմբերի.
պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթաներ,
օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշղթաներ:

Պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթաները տարբերակման պարագայում բաժանվում են երեք առանձին մասերի.
1) առանձին ծաղկաշղթաներ,
2) միմյանց զուգահեռ երկու ծաղկաշղթաներ,
3) միմյանց զուգահեռ երեք ծաղկաշղթաներ:

Օժանդակ զարդամոտիվներով ծաղկաշղթաների հորինվածքային լուծումների հիմքում ընկած են պարզ գծային պատկերագրությամբ առանձին և միմյանց զուգահեռ ծաղկաշղթաները, որոնք տարբերակման պարագայում կարելի է բաժանել չորս առանձին մասերի.
1) Բույսերի վեգետացիոն պրոցեսը մասամբ արտահայտող ծաղկաշղթաներ, որոնց դեպի վար և վեր ուղղված կորերի անկյունները զարդարված են էլիպսաձև, եռանկյունաձև, զույգ կիսաշրջանաձև պտղանման զարդամոտիվներով:
2) Միմյանց զուգահեռ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթաներ, որոնք ներգծված են կիսաշրջանաձև, թեք գծերից կազմված, շրջանաձև, ինչպես նաև կորերից կազմված և վերջիններիս հետ համադրվող գծերից կազմված ճյուղանման զարդապատկերներով:
3) Միմյանց զուգահեռ և գծերի հետ հատվող ծաղկաշղթաներ, որոնք ներգծված են կիսաշրջանաձև զարդապատկերներով:
4) Ծաղկաշղթաներ, որոնց կորերի անկյունները զարդարված են դեպի ներքև ուղղված ճյուղ կամ ծիլ հիշեցնող զարդամոտիվներով:

Պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթայաձև զարդապատկերները, ինչպես ուսումնասիրողների կողմից վաղուց նկատվել է[1], զուտ ֆորմալ տեսանկյունից բաղդատվում են առաջավորասիական հնագույն (հիմնականում բրոնզի դարաշրջանի՝ փոքրասիական, հյուսիսմիջագետքյան, իրանական) գունազարդ խեցեղենի համանման զարդապատկերների հետ[2]:

Հայկական լեռնաշխարհի երկրորդ հազարամյակի համաժամանակյա գունազարդ խեցեղենը ևս զերծ չի մնացել պարզ գծային ծաղկաշղթայաձև զարդապատկերների պատկերագրությունից: Ք.ծ.ա. երկրորդ հազարամյակում Հյուսիսային Միջագետքում և վերջինիս հարող Հայկական լեռնաշխարհի տարածքներում լայն տարածում է ստանում խարուրյան տիպի գունազարդ խեցեղենը[3], որի հյուսիսային սահմանը հասնում էր մինչև Վանա լիճ: Խարուրյան տիպի գունազարդ խեցեղենին ևս հատուկ էր պարզ գծային ծաղկաշղթայաձև զարդապատկերների պատկերագրությունը:

---

[1] *Г. Тирацян, О расписной керамике древней Армении, Ер., 1965, 3, стр. 272*
[2] *Helmuth Neumbaur, Die Griechische Schwarzmeerkolonization in der sowjietischen Geschchesschreibung, Saeculum, 11,1960, H. 1-2, 132-155.*
[3] *Hroud a Barthel, Die bemarte Keramic des zweiten Jahrtausends in Nordmesopotamien und Nordsyrien, Belrin, 1957.*

Ուսումնասիրողների կարծիքով Օսաենի կողմից պեղված[4] Ք.ծ.ա. IX-VIII դդ. թվագրվող և «ուրարտական» համարվող գունազարդ խեցեղենը վերաբերվում է վերոհիշյալ խաբուրյան տիպին և հանդիսանում է վերջինիս ավելի ուշ տարատեսակներից մեկը՝ գոյատևելով մինչև Ք.ծ.ա. I հազարամյակի սկզբները[5]: Օսաենի կողմից պեղված Վանի գունազարդ խեցեղենին ևս հատուկ են պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթայաձև զարդապատկերները: Վերջիններս թե՛ պատկերագրությամբ (առանձին և միմյանց զուգահեռ, ինչպես նաև՝ օժանդակ զարդամոտիվներով ծաղկաշղթաներ) և թե՛ անոթների ձևերով՝ բաց անոթներ (թասեր, փիալաներ), ինչպես նաև զարդամոտիվների տեղադրման առանձնահատկություններով (պսակներից ներքև պատկերագրում[6]), զարմանալիորեն աղերսվում են Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի համանման զարդապատկերների հետ:

Հարկ ենք համարում անդրադառնալ այսպես կոչված «ուրարտական» գունազարդ խեցեղենի խնդրին: Այս հարցում ուսումնասիրողների տեսակետները էապես տարբերվում են միմյանցից: Առաջին տեսակետի համաձայն, վերջինիս գոյության ժամանակաշրջանը համընկնում է ուրարտական պետության կազմավորման սկզբնական փուլի հետ, որից հետո այն փոխարինվում է կարմիր փայլեցված խեցեղենով[7]: Երկրորդ տեսակետի համաձայն, ուրարտական գունազարդ խեցեղենը գոյություն է ունեցել նաև ուշ ուրարտական ժամանակաշրջանում: Սույն տեսակետի համար հիմնական կռվան է Կարմիր-բլուրից հայտնաբերված գունազարդ ասկը[8], սակայն, ըստ երևույթին վերջինս փոքրագիտական ներմուծման արդյունք է[9]:

Երրորդ տեսակետի համաձայն, որն էականորեն տարբերվում է վերոհիշյալ երկու տեսակետներից, Վանի՝ Օսաենի կողմից հայտնաբերված, «ուրարտական» կոչվող գունազարդ խեցեղենը պատկանում է խաբուրյան տիպի գունազարդ խեցեղենին, որի ակունքները գալիս են Ք.ծ.ա. II հազարամյակից և ծագումով ոչ թե ուրարտական է, այլ պատկանում է տեղական էթնիկ տարրերին[10]: Այս տեսակետը փաստվում է Հասանլուում գոյություն ունեցող շերտագրական իրավիճակով, որտեղ առավել վաղ ավանդույթներ ունեցող խաբուրյան տիպի գունազարդ խեցեղենի կողքին հայտնաբերվել է ուրարտական կարմիր փայլեցված խեցեղեն[11], ինչպես նաև Բաստամում տիրող իրավիճակով, որտեղ ուրարտական ամրոցում առկա է կարմիր փայլեցված խեցեղեն, իսկ նրա կողքին՝ տեղական մշակույթին պատկանող դամբարանում հայտնաբերվել է գունազարդ խեցեղեն[12]: Սույն տեսակետի համաձայն, ուրարտական նվաճումների հետևանքով տեղական գունազարդ խեցեղենը մղվում է երկրորդ պլան՝ իր տեղը զիջելով ուրարտական կարմիր փայլեցված խեցեղենին: Ուրարտուի անկումից հետո այստեղ գերիշխող դերն անցնում է տեղական էթնիկական տարրերին[13], որոնք վաղուց գունազարդ խեցեղենի կրողներն էին հանդիսանում: Այս տարրերի տեղաշարժերի հետևանքով գունազարդ խեցեղենը լայն տարածում է ստանում Հայկական լեռնաշխարհի մնացյալ տարածքներում: Այս տեսակետի օգտին, որպես համոզիչ կռվան, բերվում է Ալթին-Թեփեի,[14] Թեյշեբայինիի,[15] Թոփրաք-կալեի[16] վաղ հայկական շերտերից հայտ-

---

[4] *H. Von der Osten, Die urartaische Tφpferei aus Van und die Mφglichkeit iher Einorbnung in die anatolische Keramic, Orientalia, N.S. b. 21, fasc. 3, 1952, p.p.307-328.*

[5] *Ф. Тер–Мартиросов, О происхождении расписной керамики античной Армении, ИФЖ, 1, 1974, стр 55.*

[6] *H. Von der Osten, նշվ. աշխ.:*

[7] *Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, стр 108.*

[8] *Г. Тирацян, նշվ. աշխ, էջ 271-272:*

[9] *Ф. Тер–Мартиросов, նշվ. աշխ., էջ 65:*

[10] *Նույնը:*

[11] *R. Dyson, Digging in Iran: Hassnalu 1959: Expedition the Bulleten of the University Museum of the univ. of Pensilvania. Spring, 1959, vol.1.3:*

[12] *Stephan Krol1, Die Keramic aus Bastam. Archeologische Mittei lungen aus Iran, Berlin, 1970, 31-34.*

[13] *Ф. Тер–Мартиросов, նշվ. աշխ., էջ 71:*

[14] *K. Emre, The Urartian pottery from Altintepe, "Belleten" gitt. 33, Sayi131, Angara, p.p. 134-135.*

[15] *А. Мартиросян, Город Теймебаини, Ер., 1961, стр. 137-150:*

նաբերված գունազարդ խեցեղեն գտածոների առկայությունը: Ըստ երևույթին, սակայն այս ճանապարհով է, որ Վանի գունազարդ խեցեղենն իր ազդեցությունն է գործել Հայաստանի հեղենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի վրա և վերջինիս ավանդույթները շարունակվել են նաև հեղենիստական ժամանակաշրջանում:

Ծաղկաշղթայաձև զարդապատկերների խմբավորման պարագայում հիմք են ընդունվել դրանց պատկերագրական առանձնահատկությունները: Ելնելով սույն սկզբունքից՝ վերոհիշյալ զարդամոտիվները քննության կենթարկվեն ըստ ձևակազմական, ժամանակագրական, հորինվածքային և գունազարդման առանձնահատկությունների:

Պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթաներ.

ա) Առանձին ծաղկաշղթաներ (տխտ.I,նկ.1) ձևակազմական առումով հատուկ են թե՛ բաց և թե՛ փակ տիպի անոթների տարբեր մասերի հարդարանքին: Բաց տիպի անոթներում (կիսագնդաձև թասեր) վերոհիշյալ զարդապատկերները զարդարում են վերջիններիս ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հատվածները: Սույն կիսագնդաձև թասերը հայտնաբերվել են Արտաշատի առաջին բլուրի[17] և Հողմիկի[18] Ք.ծ.ա. II-I դարերի շերտերից: Ելնելով կիսագնդաձև թասերի ձևաբանական (նուրբ պատերի առկայություն),ինչպես նաև գունազարդման առանձնահատկություններից (անփութորեն արված զարդապատկերներ, թեթև փայլեցված մակերեսի առկայություն, չներկված աստառի վրա գունազարդում), որոնք հատուկ են Ք.ծ.ա. I դարի գունազարդ խեցեղենին[19], սույն կիսագնդաձև թասերը կարելի է թվագրել Ք.ծ.ա. I դարով: Փակ տիպի անոթը (սափոր), որտեղ ծաղկաշղթայաձև զարդապատկերը հարդարում է վերջինիս ուսամասի հատվածը, հայտնաբերվել է Արտաշատի VII բլրի II-Ադ. շերտերից:[20] Ելնելով սրա հետ հայտնաբերված և Ք.ծ.ա. I դարով թվագրվող թռչնազարդ պնակի[21] ժամանակագրությունից, ինչպես նաև սափորի բեկորի գունազարդման առանձնահատկություններից (անփութորեն արված զարդապատկերներ և անփայլ մակերեսի առկայություն)՝ սա պետք է թվագրել Ք.ծ.ա. I դարով: Հորինվածքային առումով վերոհիշյալ զարդապատկերներն ուղեկցվում են գոտեենման և օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշղթայաձև զարդապատկերներով: Ինչ վերաբերում է սույն զարդապատկերների գունազարդման առանձնահատկություններին, սպա վերջիններս ունեցել են թե՛ միագույն և թե՛ բազմագույն գունազարդում: Միագույն օրինակների դեպքում կարմիր դաշտը գունազարդվել է սևով, իսկ դեղնականաչավունը՝ մուգ կարմիրով: Բազմագույն օրինակի պարագայում դարչնագույն դաշտը գունազարդվել է սևով և կարմիրով, առանձին ծաղկաշղթան գունազարդվել է սևով: Ինչպես վերը նկատեցինք, պարզ գծային պատկերագրությամբ առանձին ծաղկաշղթաներ հանդիպում են Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղենում: Քննվող ծաղկաշղթայաձև զարդապատկերները թե՛ պատկերագրությամբ և թե՛ անոթների ձևերով զարմանալիորեն բարդատվում են Վանի ավելի վաղ օրինակների հետ: Ըստ երևույթին, արդեն վերը հիշատակված ճանապարհով Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղենի ավանդույթները շարունակվել են Հայաստանի հեղենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենում:

բ) *Միմյանց զուգահեռ երկու ծաղկաշղթաներ (տխտ.I,նկ.2)* ձևակազմական առումով հատուկ են թե՛ փակ (փոքր կճուճ և ծորակավոր ջրաման) և թե՛ բաց տիպի (կիսագնդաձև թասեր, փիալա) անոթների տարբեր մասերի հարդարանքին: Բեկորային օ-

---

[16] *Lehman-Haupt, Materialen zur altern Geschichte Armeniens und Mesopotamiens, GÖttingen, 1907, Taf.8,1:*

[17] *Կոլեկցիոն համարը՝ 73/284:*

[18] *Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան, Վ. Զինջիրջյան, Ախուրյան գետի վերին հոսանքում կատարված հնագիտական պեղումների նախնական արդյունքները (Ջրաձոր և Հողմիկ գյուղերի տարածքում), հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույց ներում (1986-1987թթ. պեղումների արդյունքները), Եր., 1992, էջ 113-114, ադ. CXXII:*

[19] *Ժ. Խաչատրյան, Արտաշատ II, Եր., 1981, էջ 100:*

[20] *Կոլեկցիոն համարը՝ 73-26:*

[21] *Ա. Նախշքարյան, Հայաստանի հեղենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի կենդանական զարդապարկերները, ՀՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 32, SKS. 1, նկ.11:*

ղինակի վերին մասի բացակայության պատճառով վերջինիս ձևը չի վերականգնվում[22]: Փակ տիպի անոթներում՝ փոքր կճուճ[23], ծորակավոր ջրաման[24], վերոհիշյալ զարդապատկերները զարդարում են վերջիններիս ուսամասի հատվածները: Ծորակավոր ջրամանը թվագրված է Ք.ծ.ա. I դարով: Փոքր կճուճը հայտնաբերվել է Արտաշատի VII բլրի Ք.ծ.ա. II-I դդ. թվագրվող շերտից: Ելնելով վերջինիս գունազարդման առանձնահատկություններից (անփութորեն արված զարդապատկերներ, անփայլ մակերես), որը հատուկ է Արտաշատի Ք.ծ.ա. I դարի[25] գունազարդ խեցեղենին սույն կճուճը կարելի է թվագրել կոնկրետ Ք.ծ.ա. I դարով: Բաց տիպի անոթներում (կիսագնդաձև թասեր, փիալա) միմյանց զուգահեռ երկուական ծաղկաշղթաները հատուկ են սրանց թե՛ արտաքին և թե՛ ներքին հատվածների հարդարանքին: Կիսագնդաձև թասերի ներքին մասերում պատկերագրված ծաղկաշղթաները[26] արդարել են վերջիններիս պսակներից ներքև ընկած հատվածները, իսկ արտաքին հատվածում պատկերված ծաղկաշղթաները զարդարել են սրանց միջին մասից մինչև ստորին սահմանն ընկած տարածքները[27]: Վերոհիշյալ կիսագնդաձև թասերն իրենց ձևաբանական հատկություններով (ներճկված պսակներ և նուրբ պատեր) բաղդատվում են Ք.ծ.ա. I դարի կիսագնդաձև թասերի հետ, այս թվագրման օգտին են խոսում սույն թասերի անփութորեն արված զարդապատկերները: Փիալայի պարագայում ծաղկաշղթաները զարդարում են վերջինիս արտաքին հատվածի երստավոր մասից մինչև ներճկված վիզն ընկած տարածքները: Սույն փիալան հայտնաբերվել է Հողմիկի Ք.ծ.ա. II-I թվագրվող շերտից[28]: Այս անոթի ձևաբանական և գունազարդման առանձնահատկությունների համեմատություններից ելնելով՝ այն ևս կարելի է թվագրել Ք.ծ.ա. I դարով[29]: Բեկորային օրինակի ձևը չի վերականգնվում[30], սակայն ուղեկցվող գունազարդ ափսեի օգնությամբ, որը թվագրված է Ք.ծ.ա. I դարով, այն ևս կարելի է թվագրել նույն դարով: Հորինվածքային առումով վերոհիշյալ զարդապատկերներն ուղեկցվում են գոտեբնման, շղթայաձև ալիքաձև, կետազարդ ալիքաձև գծերից կազմված, օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշղթայաձև, ինչպես նաև կենդանական (այծ) զարդամոտիվներով: Ինչ վերաբերում է վերոհիշյալ զարդապատկերների գունազարդմանը, ապա վերջիններս ունեցել են թե՛ միագույն և թե՛ բազմագույն գունազարդում: Միագույն օրինակների դեպքում վարդագույն և դարչնագույն դաշտերը գունազարդվել են կարմիրով, կարմիր դաշտը սևով: Բազմագույն օրինակների պարագայում դարչնագույն դաշտը գունազարդվել է կարմիրով և սևով (վերինը՝ սև, ստորինը՝ կարմիր), մարմնագույն դաշտի դեպքում՝ կարմիրով և շագանակագույնով: Զուգահեռ ծաղկաշղթայաձև զարդապատկերների գունազարդման առանձնահատկություններից մեկն այն է, որ թե՛ միագույն և թե՛ բազմագույն օրինակների դեպքում գունազարդվել են սև և կարմիր կայուն երանգներով: Հանդիպում է բազմագույն օրինակ, որտեղ ծաղկաշղթաներից մեկը սև է, իսկ մյուսը՝ կարմիր: Ըստ երևույթին, բազմագույն օրինակի պարագայում միավորվել են ծաղկաշղթաների այս երկու տարածված գույները: Չնայած հանդիպում են շեղումներ նաև գունազարդման ընդունված կանոններից, որտեղ ծաղկաշղթաները գունազարդվել են շագանակագույնով: Ինչպես վերը նկատեցինք, զուգահեռ ծաղկաշղթայաձև զարդապատկերներ հանդիպում են Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղենում և, ըստ երևույթին, հելլենիստական ժամանակաշրջանում առկա նմանատիպ զարդապատկերները վերը բերված օրինակների ավանդույթների շարունակությունն են:

---

[22] Կոլեկցիոն համարը՝ 5/73:
[23] Կոլեկցիոն համարը՝ 75/73:
[24] Կոլեկցիոն համարը՝ 79/73:
[25] Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 100:
[26] Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան, Վ. Զինզիրջյան, նշվ. աշխ., էջ 113-114, աղ. CXXII:
[27] Կոլեկցիոն համարը՝ 74/73:
[28] Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան, Վ. Զինզիրջյան, նշվ. աշխ., էջ 113-114, աղ. CXXII:
[29] Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 82:
[30] Կոլեկցիոն համարը՝ 74/73:

գ) *Միմյանց զուգահեռ երեք ծաղկաշրջաններ (տխտ.I, նկ. 3-4).* Ձևակազմական առումով հատուկ են թե՛ փակ (ծորակավոր ջրաման, կարաս, տափաշիշ) և թե՛ բաց տիպի (միայն կիսագնդաձև թասեր) տարբեր մասերի հարդարանքին: Փակ տիպի անոթներում սույն ծաղկաշրջանները զարդարում են վերջիններիս ուսամասի (կարաս[31], ծորակավոր ջրաման[32]) և եզրամասի (տափաշիշ[33]) հատվածները: Ծորակավոր ջրամանը բաղդատվում է Ք.ծ.ա. I դարով թվագրված Արտաշատի VIII բլրից հայտնաբերված ջրամանի հետ[34], իսկ ինչ վերաբերում է Դվինից հայտնաբերված կարասի և տափաշշի ժամանակագրությանը, ապա սրանք թվագրված են Ք.ծ.ա. II-I դարերով, բայց իրենց գունազարդման առանձնահատկություններով[35] (թեթև փայլեցված մակերես, անփութորեն արված զարդապատկերներ) բաղդատվում են Ք.ծ.ա. I դարով թվագրված գունազարդ խեցեղենի հետ[36]: Հավանաբար սրանք նա պատկանում են Ք.ծ.ա. I դարի գունազարդ խեցեղենին: Բաց տիպի անոթներում (կիսագնդաձև թասեր) սույն ծաղկաշրջանները զարդարում են վերջիններիս արտաքին հատվածները[37]: Մի դեպքում զարդարում են սրանց պատկերներից ներքև ընկած հատվածները[38], իսկ մյուս դեպքում՝ միջին հատվածից ստորին հատվածն ընկած սահմանները: Ներճկված պսակով վերոհիշյալ կիսագնդաձև թասերը թվագրված են Ք.ծ.ա. I դարով[39]: Սույն ժամանակագրությանը չեն հակասում նաև կիսագնդաձև թասերի գունազարդման առանձնահատկությունները (թեթև փայլեցված մակերես, անփութորեն արված զարդապատկերներ): Բենդրային օրինակի ձևը չի վերականգնվում[40], բայց ուղեկցվող ներճկված պսակով Ք.ծ.ա. I դարով թվագրված[41] գունազարդ կիսագնդաձև թասի օգնությամբ կարելի է թվագրել Ք.ծ.ա. I դարով: Հորինվածքային առումով սույն ծաղկաշրջաններն ուղեկցվում են գոտենման շղթայաձև, ցանցաձև, կետազարդ ալիքաձև, զիգզագաձև զարդապատկերներով: Միմյանց զուգահեռ երեք ծաղկաշրջաններն ունեցել են միայն բազմագույն գունազարդում: Դարչնագույն դաշտը գունազարդվել է կարմիրով, շագանակագույնով, սպիտակով (ծաղկաշրջանները սպիտակ), կարմիրով և շագանակագույնով (ծաղկաշրջանները շագանակագույն), իսկ մյուս դեպքում դարչնագույն դաշտը գունազարդվել է սև և կարմիր երանգներով (ծաղկաշրջանները երկգույն՝ եզրագծերը սև,մեջը՝ կարմիր): Դեղնավուն դաշտը գունազարդվել է դարչնագույնով և շագանակագույնով (ծաղկաշրջանները շագանակագույն), նարնջագույն դաշտը գունազարդվել է սևով և կարմիրով (ծաղկաշրջանները՝ սև): Միմյանց զուգահեռ երեք ծաղկաշրջանների գունազարդման առանձնահատկությունն այն է, որ վերջիններս հիմնականում գունազարդվել են շագանակագույն և սև երանգներով: Սև գույնով պատկերված ծաղկաշրջանների մի մասի գունազարդման առանձնահատկությունն այն է, որ սրանց՝ միմյանց զուգահեռ կորերը ներգծվել են կարմիր երանգով: Ընդունված կանոններից միակ շեղումը սպիտակ երանգով գունազարդված ծաղկաշրջան է: Ավելացնենք, որ միմյանց զուգահեռ երեքական ծաղկաշրջանները, գոնե մեզ հայտնի նյութերում, չունեն իրենց համաժամանակյա զուգահեռները Հայաստանի հարակից երկրների և հելլենիստական աշխարհի գունազարդ խեցեղենի այլ նյութերում: Սակայն, պատկերագրական առումով իրենց հիմքում ունենալով պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրջանները, որոնց երկու օրինակները, ինչպես վերը նկատեցինք, առկա են Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղենում, հարստացվել են նա մեկ ծաղկաշրջայով և ստեղծել յուրօրինակ պարզ հորինվածքային լուծում:

---

[31] *Գ. Քոչարյան, Դվինը անտիկ դարաշրջանում, Եր., 1974, էջ 41, ՏԽՏ XV, 13:*
[32] *A. Мартиросян, Арташатский Ер., 1974, рис. 23.*
[33] *Գ. Քոչարյան, նշվ. աշխ., էջ 41, տխտ. XV, 13:*
[34] *Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, 10, տխտ. I, նկ. 1:*
[35] *Գ. Քոչարյան, նշվ. աշխ, էջ 41, տխտ. XV, 13:*
[36] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ, էջ 82-100:*
[37] *Կոլեկցիոն համարը՝ 24/73,44/73,55/73:*
[38] *Կոլեկցիոն համարը՝ 44/73:*
[39] *Կոլեկցիոն համարը՝ 55/73:*
[40] *Կոլեկցիոն համարը՝ 24/73:*
[41] *Կոլեկցիոն համարը՝ 25/73:*

Օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշղթաներ. Սրանց հորիզոնական լուծումների հիմքում ընկած են սարգ գծային պատկերագրությամբ առանձին և միմյանց զուգահեռ ծաղկաշղթաները, որոնք իրենց ծագումով լինելով ավանդական զարդամոտիվներ՝ հելլենիստական ժամանակաշրջանում, հավանաբար ելնելով տվյալ ժամանակաշրջանի ճաշակից և պատկերացումներից, հարստացվել են օժանդակ զարդամոտիվներով:

ա) *Բույսերի վեգետացիոն պրոցեսը մատնող արտահայտող ծաղկաշղթայաձև զարդապատկերներ.* Սրանք ձևակազմական առումով հատուկ են զուտ բաց անոթների (կխսագնդաձև թասեր, ափսե, պնակ) տարբեր մասերի հարդարանքին: Կիսագնդաձև թասերին բնորոշ են դեպի վար ուղղված կորերով և վերջիններիս անկյուններում էլիպսաձև (պտղանման) զարդամոտիվներով (տխտ.1 նկ.5.) զարդարված ծաղկաշղթաները: Դրանցից մեկի միմյանց զուգահեռ կորերը ներգծված են նաև թեք գծերից կազմված զարդամոտիվներով[42]: Սույն ծաղկաշղթաները հատուկ են կիսագնդաձև թասերի արտաքին մասերի հարդարանքին և զարդարում են վերջիններիս միջին հատվածները: Վերոհիշյալ կիսագնդաձև թասերն իրենց ձևարանական (ներծկված պսակով թաս[43], բարակ պատերով թասեր)[44] և գունազարդման (թեթև փայլեցված մակերես) առանձնահատկություններով բաղդատվում են Ք.ծ.ա. I դարով թվագրված գունազարդ խեցեղենի հետ: Սրանք հայտնաբերվել են Արտաշատի I բլուրի II-I դդ. թվագրվող շերտից, տակայն վերոհիշյալ համեմատությունների հաշվառմամբ, կարող են թվագրվել կոնկրետ Ք.ծ.ա. I դարով: Ծաղկաշղթաների մի մասի պատկերագրությունը հետևյալն է. դեպի վար ուղղված, միմյանց զուգահեռ կամ առանձին ծաղկաշղթաների կորերի անկյունները զարդարված են կիսաշրջանաձև (տխտ.1,նկ.7), եռանկյունաձև (տխտ.1,նկ.8), էլիպսաձև (տխտ.1, նկ. 9)՝ պտղանման զարդամոտիվներով, ինչպես նաև սրանց՝ միմյանց զուգահեռ կորերը ներգծված են էլիպսաձև (հատիկ կամ սերմ հիշեցնող) զարդամոտիվներով (տխտ.1, նկ. 7,8): Այս ծաղկաշղթաները ձևակազմական առումով հատուկ են բաց անոթների (թասեր) պտակների հարդարանքին[45]: Վերոհիշյալ ներծկված թասերը ձևարանական և գունազարդման առանձնահատկություններով (անփութորեն արված զարդեր, թեթև փայլեցված մակերես) առնչվում են Արտաշատի դամբարաններից հայտնաբերված՝ Ք.ծ.ա. I դարով թվագրված նմանատիպ թասերի հետ[46]: Հորիզոնական առումով սույն զարդամոտիվներն ուղեկցվում են գոտենման, ալիքաձև, սարգ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթայաձև զարդապատկերներով: Սույն զարդամոտիվներն ունեցել են բազմագույն գունազարդում: Դարչնագույն դաշտի պարագայում գունազարդվել են սևով և կարմիրով: Սևով գունազարդվել են ծաղկաշղթաների կորերը, իսկ կարմիրով՝ օժանդակ զարդամոտիվները և կորերի միջև ընկած տարածքները: Դեղնականաչավուն դաշտը գունազարդվել է կարմիրով և մուգ շագանակագույնով: Կորերի եզրագծերը՝ մուգ շագանակագույնով, նրանց միջև ընկած տարածքները՝ կարմիրով: Դեղին դաշտը գունազարդվել է կարմիրով և շագանակագույնով: Ծաղկաշղթաների կորերը գունազարդվել են շագանակագույնով, իսկ օժանդակ զարդապատկերները՝ կարմիրով: Սույն ծաղկաշղթաների գունազարդման առանձնահատկությունն այն է, որ սրանք ունեցել են երկգույն գունազարդում: Ինչպես սարգ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթաները, այնպես էլ վերջիններիս հետ պատկերագրական առնչություններ ունեցող այս ծաղկաշղթաների կորերն ունեցել են կայուն պատկերագրական գունավորում: Այն է՝ գունազարդվել են սև և շագանակագույն երանգներով, իսկ օժանդակ զարդամոտիվները բոլոր դեպքերում գունազարդվել են կայուն հանդիսացող կարմիր գույնով: Քննվող ծաղկաշղթաների առանձնահատկություններից մեկն այն է, որ սրանք հանդիպում են Արտաշատի I բլուրում, և բոլոր նյութերը թվագրված են Ք.ծ.ա. I դարով:

---

[42] *Տղեկցիոն համարը՝ 72/177:*
[43] *Տղեկցիոն համարը՝ 72/284:*
[44] *Տղեկցիոն համարը՝ 72/272:*
[45] *Տղեկցիոն համարը՝ 72/229, 73/44:*
[46] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 81:*

բ) *Միմյանց զուգահեռ օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշրջաններ.* Սրանք պատկերագրության բնույթով աղերսվում են վերը նկարագրված ծաղկաշրջանների հետ: Սույն ծաղկաշրջանները ներգծված են կիսաշրջաններով (տխտ. 1, նկ. 10.), փոքր շրջաններով (տխտ. 1, նկ. 11.), թեք գծերով (տխտ. 1, նկ. 18.): Հանդիպում են ծաղկաշրջաններ, որոնց կորերը հարդարվել են փոքր կորերից կազմված (տխտ. 1, նկ. 12.), ինչպես նաև կարճ կորերի և թեք գծերի համադրումից ստացված ճյուղանման զարդապատկերներով (տխտ.1, նկ. 13.): Չնակազմական առումով սույն ծաղկաշրջանները հատուկ են միայն բաց անոթների (կիսագնդաձև թասեր, փիալաներ) տարբեր մասերի հարդարանքին: Կիսագնդաձև թասերի պարագայում սույն զարդամոտիվները զարդարում են վերջիններիս ներքին հատվածները (պսակից ներքև, ինչպես նաև միջին հատվածից մինչև կենտրոնական մասն ընկնող սահմանները[47]): Կիսագնդաձև թասերից մեկը թվագրված է Ք.ծ.ա. I դարի II կեսով[48], իսկ մյուսը հայտնաբերվել է Արտաշատի I բլուրի Ք.ծ.ա. II-I դդ. շերտերից, տակայն իր ձևաբանական (նուրբ պատերի առկայություն) և գունազարդման (անփայլ մակերես, անփութորեն արված զարդապատկերներ) առանձնահատկություններով բաղդատվում է Ք.ծ.ա. I դարով թվագրված կիսագնդաձև թասերի հետ[49]: Փիալաների դեպքում այս ծաղկաշրջանները զարդարում են վերջիններիս ներքին հատվածները և հատուկ են սրանց պսակներից ներքև ընկած տարածքներին: Քննվող փիալաներից[50] երեքը հայտնաբերվել են Արտաշատի դամբարանադաշտից և թվագրված են Ք.ծ.ա. I դարով, իսկ երկուսը՝ Արմավիրից, որոնք իրենց ձևաբանական (նուրբ պատերի առկայություն) և գունազարդման (անփայլ մակերես) առանձնահատկություններով աղերսվում են Ք.ծ.ա. I դարով թվագրված վերոհիշյալ փիալաների հետ: Սրանք նա, ըստ երևույթին, պատկանում են Ք.ծ.ա. I դարի գունազարդ խեցեղենին: Վերոհիշյալ զարդապատկերները հորինվածքային առումով չեն ուղեկցվում որևէ այլ զարդապատկերով: Այս ծաղկաշրջաններն ունեցել են թե՛ միագույն և թե՛ բազմագույն գունազարդում: Միագույն օրինակների պարագայում կարմիր դաշտը գունազարդվել է սևով, իսկ դարչնագույն դաշտը՝ կարմիրով: Բազմագույն օրինակների դեպքում դարչնագույն դաշտը գունազարդվել է կարմիրով և շագանակագույնով, (ծաղկաշրջան՝ շագանակագույնով) ինչպես նաև կարմիրով և սևով (ծաղկաշրջանների կորերը գունազարդվել են սևով, օժանդակ զարդամոտիվները՝ կարմիրով): Սույն ծաղկաշրջանների գունազարդման առանձնահատկությունն այն է, որ ծաղկաշրջանների և օժանդակ զարդամոտիվների համար կայուն սև, կարմիր և շագանակագույն երանգները կայուն դեր են ունեցել:

գ) *Կիսաշրջաններով ներգծված առանձին և միմյանց զուգահեռ ծաղկաշրջաններ* (տխտ. 1, նկ.14,15). Ճիշտ է նմանատիպ զարդամոտիվներով հարդարված գունազարդ խեցեղենը տակավ է (ներկայացված է ընդամենը երկու օրինակով), տակայն աղբյուրագիտական առումով՝ շատ արժեքավոր, քանզի նույն պատկերագրությամբ ծաղկաշրջաններ առկա են Վանի ուրարտական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենում[51]: Այստեղ նմանատիպ ծաղկաշրջան հարդարում է բաց անոթի (փիալա) ներքին մասը (պսակից ներքև ընկած մասը): Չնակազմական առումով սույն ծաղկաշրջանները հատուկ են թե՛ բաց անոթի (կիսագնդաձև թաս)[52] և թե՛ փակ անոթի (փոքր կճուճ) տարբեր մասերի հարդարանքին: Կիսագնդաձև թասի պարագայում ծաղկաշրջանն հարդարում է վերջինիս արտաքին մասը (պսակից ներքև ընկած տարածք): Իր ձևաբանական (նուրբ պատեր) և գունազարդման (անփութորեն արված զարդապատկերներ, թեթև փայլեցված մակերես) առանձնահատկություններով բաղդատվում է Ք.ծ.ա. I դարով

---

[47] *Կղեկցիոն համարը՝ 8/73:*

[48] *Հ. Խաչատրյան, Բենիամինի անտիկ դաստակերտի հեղենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը, II մաս, ԳԱՍ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. 3, Գյումրի, 200, էջ 33-35:*

[49] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 100:*

[50] *Ժ. Խաչատրյան, նույնը, Г. Тирацян, Культура древней Армении, Ер., 1988, рис. 36.*

[51] *H. Von der Osten,*

[52] *Б. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ИФЖ, 4, рис. 3.*

թվագրված նմանատիպ գունազարդ խեցեղենի հետ[53] և, ըստ երևույթին, կարող է թվագրվել նույն դարով: Փոքր կճուճի[54] պարագայում սույն զարդամոտիվը հարդարում է վերջինիս փորամասի հատվածը: Այս կճուճը հայտնաբերվել է Արտաշատի I բլրի Ք.ծ.ա. II-I դդ. թվագրվող շերտից, սակայն իր գունազարդման առանձնահատկություններով (անփութորեն արված զարդեր, անփայլ մակերես) կարելի է թվագրվել կոնկրետ Ք. ծ.ա. I դարով: Հորինվածքային առումով այս ծաղկաշղթաներն ուղեկցվում են գոտենման, ալիքաձև, թեք գծերից կազմված, ճառագայթաձև և պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթայաձև զարդապատկերներով: Ինչ վերաբերվում է ծաղկաշղթաների գունազարդմանը, ապա վերջիններս ներկայացված են թե՛ միագույն և թե՛ բազմագույն օրինակներով: Միագույն օրինակի դեպքում դեղին ֆոնը գունազարդվել է կարմիրով, իսկ բազմագույն օրինակի պարագայում դարչնագույն դաշտը՝ կարմիրով և սևով: Սևով գունազարդվել են ծաղկաշղթաների կորերը, իսկ կարմիրով՝ կիսաշրջանները: Այս, ինչպես նաև վերը բերված ծաղկաշղթաների գունազարդման առանձնահատկությունն այն է, որ վերջիններիս գունազարդման պարագայում պահպանվել են ծաղկաշղթաների գունավորման ընդունված կանոնները, այն է՝ ծաղկաշղթաները գունազարդվել են կայուն հանդիսացող սև և կարմիր երանգներով: Ուշագրավն այն է, որ Վանի նմանատիպ ծաղկաշղթան ունեցել է երկգույն գունազարդում (ծաղկաշղթայի եզրագծերը դարչնագույն գունավորում են ունեցել, իսկ օժանդակ կիսաշրջանաձև զարդապատկերները՝ կարմիր երանգավորում): Տարբեր ժամանակաշրջանների պատկանող երկգույն գունավորում ունեցող այս ծաղկաշղթաները գունազարդման եղանակով ևս բաղդատվում են միմյանց հետ: Այսպիսով, կարող ենք փաստել, որ կիսաշրջաններով ներգծված ծաղկաշղթաները, լինելով ավանդական և իրենց նախատիպերն ունենալով Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղենում, թե՛ իրենց ձևերով (բաց անոթներ), թե՛ պատկերագրության տեղով (պսակից ներքև պատկերագրություն) և թե՛ գունազարդման (երկգույն գունազարդում) առանձնահատկություններով շարունակվել են նաև հելլենիստական ժամանակաշրջանում:

դ) *Ծաղկաշղթաներ, որոնց կորերի անկյունները զարդարված են դեպի ներքև ուղղված ճյուղ կամ ծիլ հիշեցնող զարդամոտիվներով.* Սրանք ձևակազմական առումով հատուկ են թե՛ բաց (ափսե, փիալա) և թե՛ փակ (կճուճ) անոթների տարբեր մասերի հարդարանքին: Բաց տիպի անոթներում սույն զարդամոտիվները (ափսե, փիալա) հատուկ են վերջիններիս ներքին մասերի հարդարանքին (պսակից ներքև ընկած տարածք): Ուշագրավն այն է, որ այս երկու անոթների ծաղկաշղթաները ներգծված են ցանցաձև զարդամոտիվներով[55] (տխտ. 1, նկ. 16), ինչպես նաև ուղեկցվում են գոտենման և վերջիններիս հետ հատվող ալիքաձև զարդամոտիվներով ներգծված պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթաներով: Փաստորեն, այստեղ, չնայած որոշ տարբերություններին, առկա է նաև հորինվածքային լուծումների որոշակի ընդհանրություն: Ափսեն հայտնաբերվել է Արտաշատի VIII բլրից և թվագրված է Ք.ծ.ա. I դարով[56], իսկ ինչ վերաբերվում է գունազարդ փիալային, ապա վերջինս իր ձևաբանական (նուրբ պատերի առկայություն) և գունազարդման (թեթև փայլեցված մակերես, անփութորեն արված զարդապատկերներ) առանձնահատկություններով բաղդատվում է Ք.ծ.ա. I դարի գունազարդ խեցեղենի նմանատիպ օրինակների հետ[57]: Այս փիալան ևս, ըստ երևույթին, պետք է թվագրել նույն դարով: Փակ տիպի անոթում (կճուճ), (տխտ. 1, նկ. 17) սույն ծաղկաշղթան հարդարում է վերջինիս ուսամասի հատվածը[58]: Վերջինս իր ձևաբանական և գունազարդման առանձնահատկություններով (անփութորեն արված զարդապատկերներ, թեթև փայլեցված մակերես) հորինվածքային առումով վերոհիշյալ զարդապատկերներն ուղեկցվում են գոտենման, ալիքաձև, էլիպսաձև և կորերից կազմված զարդապատկերներով:

---

[53] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 82:*
[54] *Կոլեկցիոն համարը՝ 9/73:*
[55] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Կ ա ն ե ց յ ա ն, նշվ. աշխ., աղ. 1, նկ.; Б. Аракелян, Арташат I, Ер., 1981, рис. 5.*
[56] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Կ ա ն ե ց յ ա ն, նշվ. աշխ., աղ. 1, նկ. 14:*
[57] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 56:*
[58] *А. М а р т и р о с я н, Аргиштихинили, Ер., 1974, рис. 23, в:*

Տախտակ 1



Սույն ծաղկաշղթաները ունեցել են թե՛ միագույն և թե՛ բազմագույն գունազարդում: Միագույն օրինակի դեպքում դարչնագույն ֆոնը գունազարդվել է կարմիրով: Բազմագույն օրինակների պարագայում նույն դաշտը գունազարդվել է կարմիրով և շագանակագույնով (ծաղկաշղթան շագանակագույն), կարմիրով և սևով (ծաղկաշղթան սև): Այսպիսով, կարող ենք փաստել, որ սույն ծաղկաշղթաները հելլենիստական աշխարհի մյուս երկրների՝ մեզ հայտնի գունազարդ խեցեղենում չունեն իրենց զուգահեռները, բայց իրենց հորինվածքային լուծումների հիմքում ունենալով ավանդական պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթաները, ըստ ժամանակի ճաշակի և պատկերացումների՝ հարստացել են այլ զարդամոտիվներով: Այս, ինչպես նաև վերը բերված ծաղկաշղթաների առանձնահատկություններից մեկն այն է, որ վերջիններս սկզբնավորվել և գոյատևել են հիմնականում Ք.ծ.ա. I դարում:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի ծաղկաշղթայաձև զարդապատկերները, իրենց պատկերագրությամբ լինելով ավանդական, և հորինվածքային լուծումների հիմքում ունենալով Հայկական լեռնաշխարհում վկայված նմանատիպ պատկերագրությամբ առավել վաղ օրինակները (խարբերյան տիպի գունազարդ խեցեղեն և վերջինիս ավանդույթների շարունակությունը հանդիսացող Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղեն), շարունակվել են նաև քննվող ժամանակաշրջանում: Ժառանգորդություն նկատվում է նաև ծաղկաշղթայաձև զարդապատկերներով հարդարված անոթների ձևերում: Վանի ուրարտական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենում ծաղկաշղթաները հատուկ են միայն բաց անոթների (թասեր, փիալա) հարդարանքին: Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի ծաղկաշղթայաձև զարդապատկերները մեծամասնությամբ հատուկ են եղել բաց անոթների (թասեր, փիալաներ,պնակ, կիսագնդաձև թասեր) տարբեր մասերի հարդարանքին: Ուշագրավն այն է, որ ժառանգորդությունը նկատվում է նաև զարդապատկերների տեղադրման մեջ:Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղենում ծաղկաշղթայաձև զարդապատկերները զարդարել են բաց անոթների ներքին մասերը և հատուկ են եղել վերջիններիս՝ պտակից ներքև ընկած հատվածների հարդարանքին: Նույն երևույթը նկատվում է նաև Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենում: Ծաղկաշղթաներով զարդարված բաց անոթների (կիսագնդաձև թասեր, փիալաներ, թասեր, պնակներ) մեծամասնությանը ևս հատուկ է զարդապատկերների նմանատիպ տեղադրությունը: Ժառանգորդություն նկատվում է նաև գունազարդման ոլորտում: Վանում վկայված ծաղկաշղթաները ունեցել են թե՛ միագույն (կարմիր) և թե՛ բազմագույն գունազարդում (կարմիրով և դարչնագույնով): Այստեղ պարզ գծային պատկերագրությամբ առանձին կամ միմյանց զուգահեռ ծաղկաշղթաները գունազարդվել են կարմիր երանգներով, իսկ օժանդակ զարդամոտիվներով ծաղկաշղթաները ունեցել են երկգույն գունազարդում (ծաղկաշղթաների կորերը՝ դարչնագույն, օժանդակ զարդամոտիվները՝ կարմիր): Նույն երևույթը նկատվում է նաև քննվող ժամանակաշրջանի ծաղկաշղթաների գունազարդման ոլորտում: Այստեղ պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթաները ունեն միագույն գունազարդում (հանդիպում են օրինակներ, որոնք գունավորվել են կարմիրով), իսկ օժանդակ զարդամոտիվներով ծաղկաշղթաները ունեցել են երկգույն գունազարդում (օժանդակ զարդամոտիվներին հիմնականում բնորոշ է Վանում վկայված կարմիր երանգավորումը): Հելլենիստական ժամանակաշրջանում, ի թիվս սովանդական բաց անոթների, ծաղկաշղթայաձև զարդապատկերներով զարդարված են եղել նաև փակ անոթները (կճուճ, սափոր, կարաս, ծորակավոր ջրաման, տոփաշիշ): Այստեղ, որպես կանոն, ծաղկաշղթաները հարդարել են վերջիններիս ուռմասի հատվածները: Չնայած հանդիպում են շեղումներ նաև փակ անոթներում զարդապատկերների տեղադրման ընդհանուր կանոններից, որտեղ ծաղկաշղթան հարդարել է վերջիններիս եզրամասերը (տոփաշիշ) և փորամասի հատվածները (կճուճ): Ծաղկաշղթաների մյուս ձևակազմական առանձնահատկությունն այն է, որ ներքին գունազարդում ունեցող բաց անոթների կողքին ի հայտ են գալիս նաև արտաքին գունազարդում ունեցող բաց անոթներ (կիսագնդաձև թասեր, փիալաներ), որտեղ ծաղկաշղթայաձև զարդապատկերները տեղադրված են վերջիններիս միջին և ստորին հատվածներում: Ծաղկաշղթայաձև զարդապատկեր-

ների գունազարդման առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ սրանք թե՛ միագույն և թե՛ բազմագույն օրինակների պարագայում ունեցել են երեք կայուն երանգավորումներ՝ կարմիր, սև, շագանակագույն: Ծաղկաշղթաների գունազարդման կանոններից միակ շեղումը ծաղկաշղթաների սպիտակ երանգավորումն է: Որպես կանոն՝ օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշղթայաձև զարդապատկերների կորերը երանգավորվել են վերը հիշատակված՝ սև, կարմիր, շագանակագույն երանգներով, իսկ օժանդակ զարդամոտիվները, առանց բացառությունների երանգավորվել են կարմիր գույնով: Ծաղկաշղթայաձև զարդապատկերներով հարդարված գունազարդ անոթների ժամանակագրական տվյալներից ելնելով՝ կարող ենք փաստել, որ վերջիններս ի հայտ են գալիս Ք.ծ.ա. I դարի սկզբից և գոյատևում մինչև նույն դարի վերջերը:

ГИРЛЯНДОВЫЕ ОРНАМЕНТЫ РАСПИСНОЙ КЕРАМИКИ ЭЛЛИНИСТИЧЕСКОЙ АРМЕНИИ

Резюме — *А. Нахшкарян*

Гирляндовые узоры растительного орнамента расписной керамики эллинистической Армении практически не были изучены. В статье впервые дана попытка группировки гирляндовых узоров расписной керамики эллинистической Армении. Рассмотрены формологические, композиционные и расписные особенности сосудов с гирляндовыми узорами, а также хронологические данные, которые по нашему мнению были распространены в основном в I веке д.н.э. Выявлены прототипы гирляндовых узоров расписной керамики эллинистической Армении, которые присуствуют в местной расписной керамике Вана урартского периода. Приемственность замечена не только в орнаментации, но и в области форм и росписи. Эти орнаменты по нашему мнению важны и ценны не только в художественном отношении, но и могут быть источником исследования материальной и духовной культуры данного периода.